ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 304-Ա/2 **«05» մարտ 2024 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻՆ» ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀԱՅՏԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Կազմակերպել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրին» պետական աջակցություն» միջոցառումն իրականացնելու համար կազմակերպություն ընտրելու մրցույթ (այսուհետ՝ մրցույթ):

2. Հաստատել՝

1) մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն Հավելված N 1-ի,

2) մրցույթին մասնակցելու հայտի ձևը՝ համաձայն Հավելված N 2-ի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
«05» մարտի 2024 թվականի
N 304-Ա/2 հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻՆ» ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն հայտարարում է Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրին» պետական աջակցություն» միջոցառումն իրականացնելու համար կազմակերպություն ընտրելու **մրցույթ**:

Մրցույթի արդյունքներով ընտրված կազմակերպությունը երիտասարդ շահառուներին մրցութային հիմունքներով տրամադրելու է ֆինանսական աջակցություն հետևյալ ուղղություններով.

– գիտական միջոցառումների կազմակերպում,

– գիտական դրամաշնորհների տրամադրում,

– գիտական միջազգային հրապարկումների որակական և քանակական աճին նպաստող ծրագրերի կազմակերպում,

– օտարերկրյա պետությունների անվանի գիտնականների դասախոսությունների կազմակերպում,

– օտարերկրյա պետությունների առաջատար կենտրոններում երիտասարդ գիտնականների վերապատրաստում,

– գիտության ոլորտում երիտասարդների ներգրավման կամ առաջընթացին միտված այլ ծրագրեր:

Մրցույթին մասնակցելու հայտը կազմակերպության ղեկավարի պաշտոնական գրությամբ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե է ներկայացվում առձեռն (քաղաք Երևան, Օրբելի եղբայրների փողոց 22, 7-րդ հարկ, 708 սենյակ) կամ փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների փողոց 22), մինչև **2024 թվականի մարտի 26-ը** ներառյալ:

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման

վարչության հետազոտական ծրագրերի բաժնից (հեռախոս՝ +37410 21 01 40 (*113), էլեկտրոնային փոստի հասցե՝ support@hesc.am):

Հավելված N 2
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
«05 » մարտի 2024 թվականի
N 304-Ա/2 հրամանի

ՀԱՅՏ

«Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրին» պետական աջակցություն» միջոցառումն իրականացնելու համար կազմակերպություն ընտրելու մրցույթին մասնակցելու

Կազմակերպության՝

- լրիվ անվանում, կազմակերպաիրավական ձև _____
- լիազոր մարմին, գերատեսչական պատկանելություն _____
- պետական ռեգիստրում գրանցման համար, ամսաթիվ _____
- հարկ վճարողի հաշվառման համար _____
- իրավաբանական հասցե _____
- փոստային հասցե _____
- էլեկտրոնային փոստի հասցե _____
- հեռախոս _____
- ինտերնետային կայքէջ _____
- ղեկավարի ազգանուն, անուն, հայրանուն _____
- ղեկավարի գիտական աստիճան, գիտական կոչում _____
- ղեկավարի ստորագրություն _____

Կ. Տ.

«____» _____ 2024 թ.

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ*

* *մինչև 2 էջ*